

կան պարզաբանումը, ինչպես նաեւ *չարիւն* փոխաբերական իմաստը:

6. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Վերլուծական փիլիսոփայութիւնը (Analytic Philosophy), անգլիախօս երկիրներու մէջ 20-րդ դարուն յառաջացած փիլիսոփայական զանազան ուղղութիւններու հաւաքածոյ մըն է, որոնք որպէս հասարակ յայտարար ունին՝ լեզուական վերլուծման (Analysis of Language) եւ ձեւական տրամաբանութեան (Formal Logic) օգտագործումը:

Այստեղ, լեզուական վերլուծմամբ եւ ձեւական տրամաբանութեամբ կը քննարկուին՝ լեզուական արտայայտութիւնները, գաղափարները, ոճերն ու հասկացութիւնները, ինչպէս նաեւ կը հեռացուին՝ լեզուական թիրիմացութիւնները: Օրինակ բարոյագիտութեան պարագային, վերլուծական փիլիսոփայութիւնը բովանդակութեան նոր ձեւեր չի կազմեր, այլ կը քննարկէ եղած բարոյական ձեւին տարողութիւնը: Քննարկման այս նոր ձեւը կը կոչուի նաեւ *Մետա-բարոյագիտութիւն*⁽⁴⁴⁾ (Meta-Ethics, Մետա-Էթիկա), որուն մանրամասնութիւնները հետագային պիտի ներկայացուին:

Առանց յաւելեալ մանրամասնութիւններու, ստորեւ նշուած են՝ վերլուծական փիլիսոփայութեան երեք ժամանակագրական հասցրուանները, իրենց կարեւոր ուղղութիւններով եւ նշանաւոր բարոյագէտ-փիլիսոփայ ներկայացուցիչներով:-

Առաջին Հանգրուան (1900 – 1930 թ.):-

Կատարեալ Լեզուի Վերլուծում (Ideal Language Analysis)

Առաջին հանգրուանի վերլուծական փիլիսոփայական ուղղութեան ծիրէն ներս, Անգլիոյ Քեմբրիջի համալսարանի (University of Cambridge) մէջ նշանաւոր դարձան.- անգլիացիներ ուսողագէտ (մաթեմատիկոս) փիլիսոփայ **Բ. Ռասել** (Bertrand Russell, 1872 – 1970 թ.) եւ բարոյագէտ փիլիսոփայ **Ժ. Մուր** (George Edward Moore, 1873 – 1958 թ.), ինչպէս նաեւ աստրիացի-բրիտանացի փիլիսոփայ՝ **Լ. Վիտգենշտայն** (Ludwig Wittgenstein, 1889 – 1951 թ.): Ասոնց վրայ կու գար աւելնալ գերման ուսողագէտ (մաթեմատիկոս) փիլիսոփայ **Գ. Ֆրեգէ** (Gottlob Frege, 1848 – 1925 թ.), որ հիմնադիրն է *ձեւական տրամաբանութեան* (Formal Logics):

Ժ. Մուր հրատարակած է երկու վերլուծական բարոյագիտական երկեր.- 1903-ին՝ «*Բարոյագիտութեան սկզբունքներ*» („Principia Ethica“) երկը, ուր գլխաւորաբար վերլուծական միջոցներով կը քննարկէ լաւն ու բարին, պարտաւորութիւնն ու իրաւունքը: Աւելի ուշ, 1912-ին, կը հրատարակէ՝ «*Բարոյագիտութիւն*» („Ethics“) երկը, ուր կը քննարկէ բարոյագիտութեան

(44) **Մետա-բարոյագիտութիւն** (Meta-Ethics, Մետա-Էթիկա) բարոյագիտական ուղղութեան մասին, տե՛ս Մաս – 3, Էջ 126: